ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԾՁԲ-10/15-1

ք. Երևան 31 -ը մայիսի 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Պատվիրատու», մի կողմից և անհատ ձեռնարկատեր Վոլոդյա Նիկողոսյանն, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **առավելագույն գինը** կազմում է ***1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:*** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Ծառայության դիմաց վճարումն իրականացվում է ներքոհիշյալ բանաձևի հիման վրա՝

Կ.Վ.Գ = Տ.Ն.Գ. x Ա.Գ./Ն.Գ. x Կ.Ծ., որից

- Կ.Վ.Գ՝ կատարողին վճարվող գումար,

- Տ.Ն.Գ.՝ առանձին տողի միավորի նախահաշվային գին,

- Ա.Գ.՝ առաջարկվող գումար, որը կազմում է 752,300ՀՀ դրամ

- Ն.Գ.՝ նախահաշվային գումար, որը կազմում է 864, 600ՀՀ դրամ

- Կ.Ծ.՝ կատարված ծառայության ծավալ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ***ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲ վարչությունը:***

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	**Ա/Ձ Վոլոդյան Նիկողոսյան**
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Ավան, Նարեկացի 54, բն. 9
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերսբանկ» ՓԲԸ, Ավան մ/ճ
Հ/Հ 900011117034	Հ/Հ 1930069021860200
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 25398772
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-10/15-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիրը
	Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ, **այդ թվում՝**	**Քառանիվ խոտհնձիչ մեքենաների նորոգում և սպասարկում**
1		Թողարկիչի փոխարինում
2		Թափանիվի վերանորոգում
3		Մագնիտոի կոճի փոխարինում
4		Կարբյուրատորի փոխարինում
5		Շարժիչի վերանորոգում
6		Մխոցի փոխարինում
7		Շարժաթևի փոխարինում
8		Ռետինե քփացման փոխարինում
9		Այրման մոմիկի փոխարինում
10		Մեքենայի ընթացքի և գազի կարգավորման մեխանիզմին պողպատյա ճոպանի փոխարինում
11		Կտրող դանակի փոկի փոխարինում
12		Օդի զտիչի փոխարինում
13		Առջևի անիվի փոխարինում
14		Հետևի անիվի փոխարինում
15		Դանակը պտտող ռեդուկտոր
16		Խոտհնձիչի դանակի փոխարինում
17		Ռեդուկտորի առանցքակալի փոխարինում
18		Լիսեռի փոխարինում
19		Ատամնաանիվի փոխարինում
20		Շարժիչի փոխարինում
21		Փականի փոխարինում
22		Օղակի փոխարինում
23		Գլանի ներդիրի փոխարինում
24		Թողարկիչի փոխարինում
		Ձեռքի խոտհնձիչ մեքենայի(թիթեռ) նորոգում և սպասարկում
1		Թողարկիչի փոխարինում
2		Թափանիվի փոխարինում
3		Մագնիտոյի փոխարինում
4		Կարբյուրատորի փոխարինում
5		Շարժիչի վերանորոգում
6		Լիսեռի առանցքակալի փոխարինում
7		Մխոցի, օղակի փոխարինում
8		Մխոցի ներդիրի փոխարինում
9		Մխոցի մատի փոխարինում
10		Շարժաթևի փոխարինում
11		Գազի պողպատյա ճոպանը թևիկով-փոխարինում
12		Կտրող թելի հավաքման տուփի փոխարինում
		«BAXI MAIN 24» մակնիշի ջեռուցման կաթսայի նորոգում և սպասարկում
1		Ընդարձակման բաքի փոխարինում
2		Պղնձյա ջերմափոխանակիչի քիմիական մաքրում աղաքարային նստվածքներից
3		
4		Ջրի ավելացման փականի փոխարինում
5		Օդամղիչի վերանորոգում առանցքակալների փոխարինմամբ
6		Ջեռուցման ջերմային տվիչի փոխարինում
7		Պղնձյա ջերմափոխանակիչի զոդում
8		Գազի ավտոմատ փականի վերանորոգում և կարգաբերում
9		Տաք ջրամատակարարման ջերմային տվիչի վերանորոգում
10		
11		Շրջանառու պոմպի փոխարինում
12		Հետադարձ ապահովիչ փականի վերանորոգում
		Ձյունանետ մեքենայի նորոգում և սպսարկում
1		Երկտակտային շարժիչի վերանորոգում
2		Այրման մոմիկի փոխարինում
3		Թողարկիչի վերանորոգում

4		Կարբյուրատորի վերանորոգում
5		Ձյունահավաք մեխանիզմի շնեյկի ռետինի փոխարինում
6		Ձյուն մաքրող թմբուկի մազիկների փոխարինում(22 հատ)

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ծառայությունների անվանումը	Հ/մ	Քանակը	Առավելագույն գումարը (ՀՀ դրամ)	Գնման ժամանակացույց
1.	Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ	դրամ	1	1,000,000	Ծառայությունն իրականացվում է ՊՆ ՎՀ SU հայտերի հիման վրա, 2019թ. III-IV եռամսյակներին, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ.-ը. ընդ որում յուրաքանչյուր հայտի կատարման ժամկետը չպետք է գերազանցի 30 օրացուցային օրը:

	Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ՝ այդ թվում՝		
	Քառանիվ խոտհնձիչ մեքենաների նորոգում և սպասարկում		**427100**
1	Թողարկիչի փոխարինում	հատ	50000
2	Թափանիվի վերանորոգում	հատ	8000
3	Մագնիտոի կոճի փոխարինում	հատ	15000
4	Կարբյուրատորի փոխարինում	լրակազմ	19000
5	Շարժիչի վերանորոգում	հատ	35000
6	Մխոցի փոխարինում	հատ	14000
7	Շարժաթևի փոխարինում	հատ	11000
8	Ռետինե քփացման փոխարինում	հատ	2000
9	Այրման մոմիկի փոխարինում	հատ	3000
10	Մեքենայի ընթացքի և գազի կարգավորման մեխանիզմին պողպատյա ճոպանի փոխարինում	հատ	28000
11	Կտրող դանակի փոկի փոխարինում	հատ	4500
12	Օդի զտիչի փոխարինում	հատ	11000
13	Առջևի անիվի փոխարինում	հատ	12000
14	Հետևի անիվի փոխարինում	հատ	17000
15	Դանակը պտտող ռեդուկտոր	հատ	20000
16	Խոտհնձիչի դանակի փոխարինում	հատ	22000
17	Ռեդուկտորի առանցքակալի փոխարինում	հատ	3000
18	Լիսեռի փոխարինում	հատ	10000
19	Ատամնաանիվի փոխարինում	հատ	9000
20	Շարժիչի փոխարինում	հատ	80000
21	Փականի փոխարինում	հատ	8000
22	Օղակի փոխարինում	հատ	5000
23	Գլանի ներդիրի փոխարինում	հատ	15600
24	Թողարկիչի փոխարինում	հատ	25000
	Ձեռքի խոտհնձիչ մեքենայի(թիթեռ) նորոգում և սպասարկում		**170500**
1	Թողարկիչի փոխարինում	հատ	22600
2	Թափանիվի փոխարինում	հատ	10000
3	Մագնիտոյի փոխարինում	հատ	20000
4	Կարբյուրատորի փոխարինում	հատ	20000
5	Շարժիչի վերանորոգում	հատ	15000
6	Լիսեռի առանցքակալի փոխարինում	հատ	6900
7	Մխոցի, օղակի փոխարինում	հատ	20000
8	Մխոցի ներդիրի փոխարինում	հատ	8000
9	Մխոցի մատի փոխարինում	հատ	3000
10	Շարժաթևի փոխարինում	հատ	10000
11	Գազի պողպատյա ճոպանը թևիկով-փոխարինում	լրակազմ	10000
12	Կտրող թելի հավաքման տուփի փոխարինում	հատ	25000
	«BAXI MAIN 24» մակնիշի ջեռուցման կաթսայի նորոգում և սպասարկում		**192000**
1	Ընդարձակման բաքի փոխարինում	հատ	48000
2	Պղնձյա ջերմափոխանակիչի քիմիական մաքրում աղաքարային նստվածքներից	հատ	38000
3			
4	Ջրի ավելացման փականի փոխարինում	հատ	13000
5	Օդամղիչի վերանորոգում առանցքակալների փոխարինմամբ	հատ	18000
6	Ջեռուցման ջերմային տվիչի փոխարինում	հատ	15000

7	Պղնձյա ջերմափոխանակիչի զոդում	տեղ.	3000
8	Գազի ավտոմատ փականի վերանորոգում և կարգաբերում	հատ	6000
9 10	Տաք ջրամատակարարման ջերմային տվիչի վերանորոգում	հատ	9000
11	Շրջանառու պոմպի փոխարինում	հատ	39000
12 13	Հետադարձ ապահովիչ փականի վերանորոգում	հատ	3000
	Ձյունանետ մեքենայի նորոգում և սպասարկում		**75000**
1	Երկտակտային շարժիչի վերանորոգում	հատ	35000
2	Այրման մոմիկի փոխարինում	հատ	3000
3	Թողարկիչի վերանորոգում	հատ	3000
4	Կարբյուրատորի վերանորոգում	հատ	7000
5 6	Ձյունահավաք մեխանիզմի շնեյկի ռետինի փոխարինում	հատ	9000
7	Ձյուն մաքրող թմբուկի մագիկների փոխարինում(22 հատ)	լրակազմ	18000
Առանձին ծառայությունների համար նախատեսված միավորի նախահաշվային գների հանրագումար			**864600**

Սույն ծառայությունների համար պլանավորված առավելագույն գինը կազմում է **1 000 000 ՀՀ դրամ**
Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններն իրականացվում են դրանց գտնվելու վայրերում:
Ծառայությունների իրականացման համար անհրաժեշտ սարքավորումներն ու գործիքները ապահովում է կատարողը:
Ծառայության մատուցման վայրը՝ ՀՀ ՊՆ ՎՀ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Վոլոդյան Նիկողոսյան

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-10/15- 1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ծառայության անվանումը	CPV կոդ	Առավելագույն գին /ՀՀ դրամ/	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ., ըստ համապատասխան ամիսների, այդ թվում՝					
				հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 25.12.19թ.
1	Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ	50531100/1/10/1	1,000,000	500,000	500,000	500,000	1,000,000	1,000,000	1,000,000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Վոլոդյան Նիկոլայ

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-10/15-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԾՁԲ-10/15-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ -ի
Պատվիրատուի անվանումը Կատարողի անվանումը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն